

С. Н. ВАРТАНЯН. Сонорные в составе финальных консонантных комплексов современного английского языка в речи и пении, Изд-во Ереванского университета, 1987, 154 стр.

Ս. Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ժամանակակից անգլերենի ձայնորդներ պարունակող բառավերջի բաղաձայնների կապակցությունները խոսքում և երգեցողության մեջ, Երևանի համալսարանի հրատ., 1987, 154 էջ:

Գիրքը նվիրված է ժամանակակից անգլերենի բառավերջի բաղաձայնական կապակցություններին, որոնք իրենց կազմում ունեն ձայնորդներ: Ինչպես հայտնի է, ժամանակակից լեզվաբանության արդիական նշանակություն ունեցող ուղղություններից մեկը լեզուների զուգարակալ-տիպարական ուսումնասիրությունն է: Ինչպես Խոսքի Միությունում, այնպես էլ արտասահմանում շատ աշխատություններ են նվիրվում լեզվի զուգարակալ ուսումնասիրության ամենատարբեր կողմերին: Ս. Վարդանյանի սույն աշխատությունը կատարված է զուգարակալ մեթոդով: Գիրքը պարունակում է մի շարք նորություններ, սրունք մինչ այդ չեն արտացոլվել հնչյունաբանության մեջ:

Ձևայած անգլերենի ու. ու. / ձայնորդները որոշ նմանություններ ունեն զուգարակալ հայերեն և ռուսերեն լեզուների հետ, սակայն նրանք տարբերվում են նրանցից ֆունկցիոնալ և արտաբերման տեսակետից: Հեղինակի հիմնական նպատակն է եղել ցույց տալ երեք լեզուների ձայնորդների միջև եղած տարբերությունները՝ համալրելով անգլերենի հնչյունաբանության մեջ մինչ այդ գոյություն ունեցող գուցակում չգրանցված 16 նոր բաղաձայնական կապակցություններով:

Որպես կանոն օտար լեզուների ուսուցման բնագավառում հիմնական ուղղությունը դարձվել է այդ լեզվին հատուկ հնչյուններին, ինչպես՝ [θ, ʒ, w], Սակայն, ըստ հեղինակի, հիմնական ուղղությունը պետք է կենտրոնացնել համընդհանուր հնչյունների՝ մասնավորապես ձայնորդների վրա, քանի որ արտաբերության նմանության տակ թափանցած են զգալի տարբերություններ թե՛ արտաբերական և թե՛ ֆունկցիոնալ տեսակետից: Ձևահնչյունաբանական վերլուծության ենթարկելով նշված բաղաձայնական կապակցությունները, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ անգլերենի ձայնորդները տարբերվում են բառավերջի բաղաձայնական կապակցություններում, հայերենի և ռուսերենի համեմատությամբ նրանք ավելի «կըռռելի» են, և այդ «կըռռելիությունը» բացատրվում է նրանց վանկարաբանական դերով, մի ճանապարհով, որին անգլերենի ուսումնասիրողները հարկ եղած ուղղություն չեն դարձրել:

Նորություն է նաև այն, որ մինչև այժմ, ըստ անգլիացի հնչյունաբան Դանիել Զոսսի, անգլերենի ձայնորդների վանկարիությունը բացատրվում էր նրանց տևողությամբ: Սակայն, ինչպես հայտնի է, տևողությունը փոփոխական է՝ կախ-

ված ձայնորդների շրջապատում գտնվող հրե-
շյունների որակից (ձայնից, խոսքի, խոսքի ո-
նից, նախադասության մեջ բաղաձայնական
կապակցությունների գրաված դիրքից և այլն:
Ինչպես ցույց է տալիս հեղինակը փաստական
հարուստ նյութի վրա, սեզոնների ձայնորդների
վանկարաբանությունը պետք է բացատրել նրանց
ձևաբանական դիրքով և ուժեղ շեշտի բացակա-
յությամբ: Այդ վանկարաբանության շնորհիվ անգ-
լիերենի ձայնորդները երգեցողության մեջ կարող
են լինել հեն-սկետային հնչյուններ, մինչդեռ այլ
լեզուներում այդպիսի ձայնավորներն են, որը
մինչև այժմ հարկ եղած ուշադրության չի ար-
ժանացել ինչպես լեզվաբանության մեջ, այն-
պես էլ վեպի արվեստում: Այս հանգամանքը
կարևոր է հատկապես անգլիերեն լեզվով երու-
ժրձապան կառուցման ժամանակ:

Գրում առաջադրված նորայք է նաև այն,
որ հեղինակը բառավերջի այդ բաղաձայնական
կապակցություններն ուսումնասիրել է ոչ միայն
խոսքում, այլև երգեցողության մեջ: Երգեցողու-
թյունը, ինչպես հայտնի է, օգտագործում է
նույն լեզվաբանական հնչյունները, բառերը, ո-
րոնք վեպի արվեստի առանձնահատկություննե-
րի շնորհիվ հնչում են ավելի դանդաղ, տևական:
Ուստի օտար լեզվի՝ անգլիերենի ուսուցումը հեշ-
տացնելու համար նպատակահարմար է օգտա-
գործել երգեցողությունը՝ դժվար մատչելի հրե-
շյունները և հնչյունակապակցությունները ուսա-
նողներին հստակ ու մատչելի դարձնելու, նախա-
դասության ճիշտ ընկալման ու մտաբերման
համար:

Ելնելով այն բանից, որ խոսքը և երգեցո-
ղությունը իրենց ընդհանրություններով ու տար-

բերություններով ձայնակազմավորման տարբեր
ձևեր են, հեղինակն առաջին անգամ գիտականո-
րեն հիմնավորել է խոսքի և երգեցողության դիա-
լեկտիկական միասնությունը, որի խոր ուսումնա-
սիրությունը կարող է լայն հնարավորություններ
բացել բանասիրության, վեպի արվեստի, երա-
ժիշտների համար, խոսափել օտարերկրացու ար-
տասանությունից, բարձրացնել խոսքի կալտուրան՝
շեշտը դնելով խոսքի զեղազիտական կողմի վրա:
Աշխատանքում զուգահրակա մեթոդով տրվում է
նաև, թե ինչպիսի ուղիով տպավորություն կա-
րող են ստեղծել ձայնորդներն իրենց «կշռելիու-
թյամբ» բանաստեղծական արվեստում, երգեցո-
ղության մեջ և խոսքում:

Գրում նկարագրված սկզբունքները մեծ
նշանակություն ունեն կիրառական լեզվաբանու-
թյան՝ օտար լեզուների դասավանդման համար,
կարող են նպաստել բարելավելու անգլիերենի
դասավանդումը թե՛ տեսական և թե՛ գործնական
տեսակետից:

Գիրքը բաղկացած է հինգ գլուխներից, որոնք
հագեցած են անգլիերեն, հայերեն և ռուսերեն
փաստական հարուստ նյութով:

Մինչև այժմ ուշադրության չարժանացած
ձայնորդների ուսումնասիրությունը բառավերջի
բաղաձայնական կապակցություններում, խոսքի
և երգեցողության դիալեկտիկական միասնության
խնդիրը նոր ֆայլ է լեզվաբանության մեջ: Ս.
Վարդանյանի գիրքը օգտաշատ ներդրում է հրե-
շյունաբանության բնագավառում և շահեկան ու-
ղեցույց ուսանողների, անգլիերեն ուսումնասի-
րողների և դասավանդողների համար:

է. Պ. ՍԱՐԳՍՅԱՆ